ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«12» դեկտեմբերի 2023 թվականի N: 558 -Ա ք.Գյումրի

ԱՐՍԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ մասերի, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 15-ի N 1287-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ և 9-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N1550-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կանոնադրության» 29-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Արսեն Աբրահամյանի 2023 թվականի դեկտեմբերի 12-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արսեն Աբրահամյանին տրամադրել ամենամյա նվազագույն արձակուրդից մնացած մասը՝ 16 աշխատանքային օր, և 4 աշխատանքային օր ամենամյա լրացուցիչ արձակուրդը՝ 2023 թվականի դեկտեմբերի 29-ից մինչև 2024 թվականի հունվարի 29-ը ներառյալ:
2. Արսեն Աբրահամյանի արձակուրդում գտնվելու ընթացքում վերջինիս կփոխարինի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Գեղամ Բաղդասարյանը:

Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է